ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/583/2024-2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 14 փետրվարի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի, 2025 թվականի փետրվարի 14-ին քննելով ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության սնանկության գործերի բաժնի գլխավոր մասնագետ՝ Գոհար Արթուրի Հովհաննիսյանի ընտանիքի անդամ՝ Գևորգ Աշոտի Բաղդասարյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով հարուցված թիվ ՎԻՎ/583/2024-2025 վարչական գործը

ՊԱՐԶԵՑ

1. **Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.**

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.1-ին հոդվածով, իրականացրել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) 2023 թվականի տարեկան հաշվետվության ստուգում, որի արդյունքում պարզվել է, որ ՀՀ

Պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության սնանկության գործերի բաժնի գլխավոր մասնագետ Գոհար Արթուրի Հովհաննիսյանի ընտանիքի անդամ Գևորգ Աշոտի Բաղդասարյանը հաշվետու տարում Կուսակցությանը կատարել է 2,500,000 ՀՀ դրամի չափով նվիրատվություն: Կուսակցության տարեկան հաշվետվությունում առկա տվյալների արժանահավատության ստուգման նպատակով Հանձնաժողովի կողմից «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով իրականացվել է հայտարարատու անձ հանդիսացող նվիրատու՝ Գևորգ Աշոտի Բաղդասարյանի «Պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի» տարեկան հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) համապատասխան տվյալների ստուգում, որի արդյունքում արձանագրել է, որ Հայտարարագրի «Բ.6.5 Կանխիկ դրամ» բաժնում հայտարարագրված տվյալ տարվա սկզբում առկա կանխիկ գումարի չափի վերաբերյալ տվյալը սխալ կամ ոչ ամբողջական է:

1.2 2024 թվականի նոյեմբերի 27-ին Հանձնաժողովը Գևորգ Բաղդասարյանին հասցեագրել է թիվ 01/2547-2024 գրությունը՝ հրավիրելով Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը՝ նշված գրությունը ստանալուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին: Նշված գրությունը Գևորգ Բաղդասարյանը ստացել է 2024 թվականի նոյեմբերի 30-ին:

1.3 2024 թվականի դեկտեմբերի 3-ին Գևորգ Բաղդասարյանի ներկայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/741/24 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 Հանձնաժողովը 2025 թվականի հունվարի 8-ին Գևորգ Բաղդասարյանին հասցեագրել է թիվ 01/18-2025 գրությունը՝ հրավիրելով 2025 թվականի հունվարի 17-ին՝ ժամը 15:00-ին, վերոնշված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը: Նշված գրությունը Գևորգ Բաղդասարյանը չի ստացել:

1.5 Հանձնաժողովը 2025 թվականի փետրվարի 4-ին Գևորգ Բաղդասարյանին հասցեագրել է թիվ 01/470-2025 գրությունը՝ հրավիրելով 2025 թվականի փետրվարի 14-ին՝ ժամը 15:00-ին, վերոնշված Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը: Նշված գրությունը Գևորգ Բաղդասարյանը ստացել է 2025 թվականի փետրվարի 7-ին (հիմք՝ LO126458614AM ստացման ծանուցագրի վերաբերյալ Հայփոստ ԲԲ ընկերության պաշտոնական կայքի տվյալներ):

1.6 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Գևորգ Աշոտի Բաղդասարյանի բացակայությամբ 2025 թվականի փետրվարի 14-ին՝ ժամը՝ 15:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումը ու պարզաբանումները

Գևորգ Բաղդասարյանը 2024 թվականի դեկտեմբերի 3-ին վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման ժամանակ Հանձնաժողովին հայտնել է, որ կնոջ՝ Գոհար Հովհաննիսյանի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու հայտարարագրում կանխիկ դրամական միջոցները հայտարարագրել է չորս միլիոն ՀՀ դրամ, հետագայում 2023 թվականի տարեկան հայտարարագիրը ներկայացնելիս թյուրիմացաբար նույն թիվն է հայտարարագրել, քանի որ տեղյակ չի եղել, որ հաշվետու տարվա ընթացքում իր կատարած ծախսերը, մասնավորապես՝ ավտոմեքենայի ձեռքբերման համար կատարված ծախսը և Կուսակցությանը կատարված նվիրատվությունը պետք է ներառված լինեին հայտարարագրված տվյալներում: Ըստ էության 2023 թվականի տարեսկզբի դրությամբ առկա կանխիկ դրամական միջոցի չափը 4,000,000 ՀՀ դրամի փոխարեն պետք է հայտարարագրեր 9,300,000 ՀՀ դրամ: Միաժամանակ նշել է, որ տարեսկզբում առկա կանխիկ գումարի վերաբերյալ տվյալը թաքցնելու որևէ միտում չի ունեցել:

III Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/583/2024-2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում հետևյալը՝

3.1 ՀՀ ԱՆ ՔԿԱԳ տվյալների շտեմարանի համաձայն՝ Գևորգ Բաղդասարյանը հանդիսանում է հայտարարատու պաշտոնատար անձ, ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության սնանկության գործերի բաժնի գլխավոր մասնագետ Գոհար Արթուրի Հովհաննիսյանի ամուսինը:

3.2 Օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.3 Հայտարարագրի «Բ.6.5 Կանխիկ դրամ» տվյալ տարվա սկզբում առկա կանխիկ դրամի գումարը հայտարարագրել է 4,000,000 ՀՀ դրամ, մինչդեռ, ըստ վարույթի ընթացքում ձեռքբերված տվյալների, պետք է հայտարարագրեր 9,300,000 ՀՀ դրամ:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք են (...) հարկային, մաքսային ծառայությունների բարձրագույն և գլխավոր (...) պաշտոն զբաղեցնող անձինք:

4.2 Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամները հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու հայտարարագրում ներկայացնում են իրենց գույքի և եկամուտների, իսկ դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրերում՝ գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալներ:

4.3 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը սահմանող) 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ Հայտարարագիրը ներառում է

հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները:

4.4 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.7 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա՝ ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.9 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է

հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյո՞ք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ, մասնավորապես, Օրենսդրի կողմից սահմանված պահանջների կատարումը նպատակ է հետապնդում հանրության համար բացահայտել պաշտոնատար անձի գույքային դրության վերաբերյալ տվյալները, որը տվյալ դեպքում խաթարվել է Գևորգ Բաղդասարյանի կողմից սույն որոշմամբ հաստատված փաստերի վերաբերյալ տվյալներ չներկայացնելու արդյունքում:

Սույն գործով ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության սնանկության գործերի բաժնի գլխավոր մասնագետ Գոհար Հովհաննիսյանի ընտանիքի անդամը՝ Գևորգ Աշոտի Բաղդասարյանը, Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն որպես հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող անձ 2024 թվականի մայիսի 23-ին ներկայացված 2023 թվականի տարեկան հայտարարագրում թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանք՝ Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է ոչ ամբողջական տվյա, այն է.

Հայտարարագրի «Բ.6.5 Կանխիկ դրամ» տվյալ տարվա սկզբում առկա կանխիկ դրամի գումարը հայտարարագրել է 4,000,000 ՀՀ դրամ, սակայն պետք է հայտարարագրեր 9,300,000 ՀՀ դրամ՝ Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև

վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Տվյալ պարագայում Հանձնաժողովն արձանագրում է, որ դրամական միջոցների ոչ ամբողջական հայտարարագրման հետևանքով հնարավոր չի եղել բացահայտել Գևորգ Բաղդասարյանի կողմից 2023 թվականի ընթացքում կատարված ծախսերի, այդ թվում՝ Կուսակցությանը որպես նվիրատվություն փոխանցված գումարի օրինական եկամուտներով հիմնավորված և արժանահավատ լինելու հանգամանքը:

Ամփոփելով ամբողջ վերոնշյալը, և միաժամանակ հաշվի առնելով, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (*փուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով*), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, ինչպես նաև առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ»

օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության սնանկության գործերի բաժնի գլխավոր մասնագետ Գոհար Արթուրի Հովհաննիսյանի ընտանիքի անդամ Գևորգ Աշոտի Բաղդասարյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի «նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գևորգ Աշոտի Բաղդասարյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Գևորգ Աշոտի Բաղդասարյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղումներ կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ